

ԴԵՄՈՑԱՆ ՀԱՅԿ

ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ 1988-1990 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ՝

Ղարաբաղյան հիմնահարցի վերաբացումը և հայոց ազգային-ազատագրական շարժման նոր վերելքը համընկավ նախկին ԽՍՀՄ-ում Միխայիլ Գորբաչովի կողմից հռչակված վերակառուցման և ազատախոսության քաղաքականության հետ՝ որոշակիորեն դեկավարվելով քաղաքական այդ գծի ուղենիշերով: Մակայն Հայաստանի հետ վերամիավորվելու արցախահայության պահանջը խորհրդային կուսակցական վերնախավի կողմից դիտվեց որպես լուրջ մարտահրավեր ԽՍՀՄ-ի գոյություն ունեցող վարչա-տարածքային բաժանմանը, որն ըստ մեծի մասի ձևավորվել էր ստալինյան բռնապետության օրոք: Կոմունիստական մեմենկլատուրայի նման դիրքորոշումը ինչպես և սպասվում էր, իր արտացոլումը գտավ խորհրդային ՁԼՄ-ների հրապարակումներում և անդրադարձներում, ուր հայկական շարժումը ենթարկվեց բացասական սյուտակավորումների և համատարած դատապարտման:

Ձգտելով խուսանավել դեպքերի և դրանք պայմանավորող պատմական անցյալի օբյեկտիվ լուսաբանումից, խորհրդային մամուլը և հեռուստատեսությունը ոչ երկրորդական դեր ունեցան հակամարտության թեժացման և կենտրոնի նկատմամբ հակամարտող կողմերի մոտ անվստահության մթնոլորտի ձևավորման գործում:

Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ արևմտյան ՁԼՄ-ների դիրքորոշումը հակամարտության առաջին երկու տարիների ընթացքում որոշակի տեղաշարժեր ունեցավ պայմանավորված ԽՍՀՄ-ում և Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական զարգացումներով, միաժամանակ կիրառելով նաև Մառը պատերազմի

* Հղվածը պատրաստվել է Բուդապեշտի «Բաց հասարակության արխիվների» (Open Society Archives) դրամաշնորհի աջակցությամբ:

Ժամանակաշրջանին հատուկ քաղաքական մոտեցումներ և քարոզչական ռազմավարություն:

Չնայած ԽՍՀՄ-ում գործաշուկյան հրապարակախոսության և Արևելք-Արևմուտք հարաբերություններում լարվածության թուլացմանն ուղղված կոնկրետ քայլերին, այդուհանդերձ, սկզբնական շրջանում արևմտյան մամուլի հրապարակումներն ի դեմս դարաբաղյան շարժման տեսնում էին որպես հարմար առիթի՝ խորհրդային ժողովուրդների շրջանում ազգայնական տրամադրությունների ուժեղացման և խորհրդային համակարգի թուլացմանը նպաստելու համար: Հենց այս հանգամանքն առավել քան մյուսները հարուցում էր խորհրդային մամուլի խիստ քննադատությամբ, որն արևմտյան լրատվական միջոցների կողմից արցախահայության պահանջների սատարումը դիտում էր որպես ԽՍՀՄ ներքին իրավիճակի ապակայունությանն ուղղված մշակված քաղաքականություն¹: Խորհրդային կողմի անհամաձայնություններն այս առումով պատահական չէին: Բավական է ասել, որ Խորհրդային Միության գծով փորձագետ, ԿՀՎ փոխտնօրեն Ռոբերտ Գեյթսին այս ընթացքում համաճարարվեց մանրակրկիտ կերպով վերլուծության ենթարկել Հայաստանում տեղի ունեցող ցույցերը²: Այս հարթության մեջ պետք է դիտել արևմտյան հրապարակումների որոշակի հայամետ դիրքորոշումը, որոնք համարյա առանց բացառության քննադատելով խորհրդային ազգային քաղաքականությունը և վարչատարածքային բաժանման սկզբունքները, հանդես էին գալիս ազգերի ու ժողովուրդների ինքնորոշման հարգման և այդ սկզբունքի կիրառման դիրքերից, մի բան, որը հետագայում, արդեն հետխորհրդային շրջանում, դիտվեց անցանկալի և մույնիսկ անընդունելի:

Այս առումով խորհրդային մամուլի հրապարակումների մեջ առանձին խումբ են կազմում Անդրկովկասում տեղի ունեցած դեպքերին անդրադառնող արևմտյան ՁԼՄ-ների առանձին հրապարակումների քննադատությամբ, որոնք խորհրդային մամուլի գնահատմամբ ոչ օբյեկտիվ էին և նպատակ ունեին միջամտել ԽՍՀՄ ներքին գործերին: Արդեն 1988թ. մարտին ԽՍՀՄ ԱԳՆ-ն բողոք հայտնեց Մոսկվայում ԱՄՆ դեսպանությամբ խորհրդային հանրապետությունների նկատմամբ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի «սադրիչ և խափանողական գործողությունների համար»³:

Կոմունիստական վերնախավի և խորհրդային մամուլի կողմից Արևմուտքի միջամտությունը ԽՍՀՄ ներքին գործերին բացատրվում էր նաև Խորհրդային Միությունում ազգային հարցի դրական լուծումից շեղելու Արևմուտքի շահագրգռվածությամբ:

Այսպես, ըստ «Բակինսկի ռաբոչի» թերթի, ազգային հարցում գոյություն ունեցող դժվարությունները, ինչպես և նախկինում ստեղծվում էին

ԽՍՀՄ-ի գաղափարական հակառակորդների, արհեստավարժ հակախորհրդային և հակակոմունիստական տրամադրություններ ունեցող ուժերի կողմից... Թերթը նշում էր, որ «...ազգային հարցը ներկա փուլում հանդիսանում է կայսրության և սոցիալիզմի միջև սուր և ինտենսիվ գաղափարական պայքարի առարկա: Ազգային վերապրումներն ամեն կերպ բորբոքվում են դրսից՝ բուրժուական աշխարհի քաղաքական գործիչների ու քարոզիչների կողմից: Իրենց գաղափարախոսական խափանիչ գործողություններում հակախորհրդային տարրերը հատուկ ուշադրություն են դարձնում ռադիոհաղորդագրությունների, հատկապես հակահեռարձակումների (инновации) վրա»⁴:

Հետաքրքրական է, որ Երևանում տեղի ունեցող համաքաղաքներն ու ցույցերը արևմտյան որոշ տեսաբանների կողմից դիտվում էին որպես խորհրդային իշխանությունների կողմից կազմակերպված գործողություններ, քանզի նման մասշտաբի քայլը ԽՍՀՄ-ում անհավանական էր դիտվում Արևմուտքում⁵: Իհարկե, Արևմուտքի համար ԽՍՀՄ ծայրամասերում տեղի ունեցած զարգացումներին ի պատասխան գորքեր ուղարկելը և որոշ դեպքերում ռազմական դրություն մտցնելն արդեն ինքնին արտակարգ փաստ էր դիտվում և այն մատուցվում էր որպես ակնառու վկայություն խորհրդային համակարգի իրական թերությունների և դրանում պարունակվող վտանգի մասին: Բավական տպավորիչ է նաև հակամարտության առաջին շաբաթների ընթացքում արևմտյան մամուլի հրապարակումների վերնագրերը, որոնք խորհրդային կողմը հակված էր դիտարկելու որպես բացահայտ սադրանք⁶:

Որոշ արևմտյան ԶԼՄ-ներ վերլուծելով խորհրդային մամուլում դարադրյալ հակամարտության լուսաբանումը և դրա մեթոդներն ու եղանակները հանգում էին այն եզրակացության, որ ազատախոսությանը ԽՍՀՄ-ում դեռ շատ սահմանափակումներ ունի⁷: Միաժամանակ, այն հանգամանքը, որ խորհրդային իշխանությունները արգելելով արևմտյան լրագրողների մուտքը հակամարտության գոտի, միաժամանակ չէին խոչնդոտում տարբեր աղբյուրներից տեղեկատվության ձեռքբերմանը, դիտվում էր որպես աննախադեպ մի երևույթ, որն անհնար էր պատկերացնել մինչգործաչույան շրջանում⁸:

Շատ դեպքերում հնարավորություն չունենալով ներկա գտնվել իրադարձությունների կիզակետում և ականատեսի աչքերով լուսաբանել դեպքերը, արևմտյան մամուլը որպես տեղեկատվության այլընտրանքային և հավաստի աղբյուր օգտագործում էր այլախոհական (դիսիդենտական) աղբյուրները: Մինչև 1988թ. մարտի սկզբները արևմտյան լրագրողներին մուտքը Անդրկովկաս արգելված էր: Նման քաղաքականությունը խորհրդային պաշտոնական շրջանները բացատրում էին այն հանգամանքով, որ մարտի սկզբներին իրադրության հանդարտեցման պայման-

ներում արևմտյան լրագրողների ներկայությունը Երևանում կարող է խրախուսել ազգայնական տարրերին⁹:

Ղարաբաղի շուրջ արևմտյան քարոզչությունը շատ հաճախ հանդես էր գալիս ավելի լայն ճակատով ներառելով վերակառուցման և խորհրդային տնտեսության ու հասարակական կյանքի մյուս բնագավառների շուրջ եղած խնդիրների լուսաբանումը և վերլուծությունը: Այսպես 1988 թ. մարտյան իր թողարկումներից մեկում անգլիական Բի Բի Սի ռադիոկայանը նշում էր, որ անհրաժեշտ է օրինականացնել մասնավոր ձեռնարկությունները և հողը սեփականաշնորհել, այսպես ոչ հեռու ապագայում ազգայնական պոթքումը կարող է հանգեցնել խորհրդային համակարգի լիակատար ճգնաժամին (sic!)¹⁰:

Խոսելով Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ արևմտյան հրապարակումների մասին, պետք է հաշվի առնել նաև դրանցում տեղ գտած թերություններն ու անճշտությունները, որոնք որոշակի ազդեցություն ունեցան Արևմուտքում հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Որոշ հրապարակումներ ի դեմս Հայաստանում և Ղարաբաղում տեղի ունեցող բռնի իրադարձությունների տեսնում էին խորհրդային համակարգի դեմ ուղղված հակազդեցության պայքարի և խորհրդային իշխանությունների համար որպես ընդօրինակման օրինակ բերվում էին կապիտալիստական երկրների կողմից կամավոր կերպով գաղութներին անկախություն շնորհելու փաստերը: Վերլուծելով տեղի ունեցող դեպքերը, արևմտյան խորհրդագետների շրջանում կարծիքներ հայտնվեցին այն մասին, որ անդրկովկասյան դեպքերը Խորհրդային Միության փլուզման սկիզբն են: Նրանցից Դանիել Փայփսն օրինակ գտնում էր, որ նման փլուզումը տեղի է ունենալու միութենական հանրապետությունների գոյություն ունեցող սահմանների պահպանմամբ¹¹:

Ամերիկյան «Թայմ» շաբաթաթերթն այս առումով կանխագուշակում էր, որ ԽՍՀՄ-ին լուրջ քաղաքական ճգնաժամ է սպասվում, որը ճակատագրական կարող է դառնալ վերակառուցման քաղաքականության համար¹²: Իսկ անգլիական «Թայմզը» գտնում էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը պետք է նախադեպ հանդիսանա ԽՍՀՄ մյուս ազգությունների համար, ինչպես նաև լեհերի, ռումինացիների, մոլդավների, ուկրաինացիների, բելոռուսների և մյուսների համար ովքեր տուժել են պետական սահմանների վերափոխումից¹³:

Իր հերթին խորհրդային կողմը հակաքարոզչության ընթացքում շատ հաճախ ի ցույց էր դնում արտասահմանյան ռադիոկայանների տարբեր բաժինների՝ մասնավորապես հայկական և ադրբեջանական գրասենյակների կողմից բերվող տվյալների և փաստերի անհամապատասխանելիությունը¹⁴: Ադրբեջանական «Բակինսկի ռաբոչի» թերթի հոդվածա-

գիրն օրինակ մեղադրելով «Ազատություն» և «Ամերիկայի ժայռ» ռադիոկայաններին նշում էր որ այս երկու ռադիոկայանները հանդես են բերում ամապել ուշադրություն դարաբաղյան դեպքերի կապակցությամբ՝ հետևելով հատուկ ծառայությունների կողմից մշակված քարոզչական մեթոդներին ու ռազմավարությունը¹⁵:

Խորհրդային քարոզչությունը մեղադրելով արևմտյան ռադիոկայաններին Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ ցուցաբերած «չափազանց» ուշադրության համար, նշում էր, որ ստեղծված իրադրությունից «կարող են օգտվել մեր նկատմամբ անբարյացակամ տրամադրվածները, «ռադիոձայները», որոնք կարող են հանդես գալ մի ժողովրդի իրավունքների պաշտպանի տոգայով, մոռանալով մյուսի մասին և այսպիսով բորբոքելով ազգամիջյան տարաձայնությունները»¹⁶: Անդրադարձնալով արևմտյան մամուլում և ռադիոհաղորդումներում դարաբաղյան իրադարձությունների լուսաբանման ռճին, խորհրդային կողմը նշում էր, որ վերջին տարիներին փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորման պայմաններում Արևմուտքը փորձում է «դրացնել բաց թողածը» և ԽՍՀՄ-ը ներկայացնել որպես ազգամիջյան երկպառակությունների հետևանքով պառակտվող երկիր¹⁷:

Չգտելով որևէ կերպ հակազդել արևմտյան քարոզչությանը, խորհրդային մամուլը հիշատակում էր Արևմուտքում առկա ռասսայական, ազգային և սոցիալ-տնտեսական խնդիրները: Այդ նպատակով օգտագործվում էին մասնաշաղկապային երկրներում գործող կոմունիստական կուսակցությունների կողմից հրատարակվող պարբերականները: Այսպես ամերիկյան կոմունիստների «Փիփլզ դեյլի վորլդ» թերթը գրում էր. «Ամերիկյան լրատվամիջոցներն ամեն կերպ չափազանցում են վերջին երկու տարիներին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած դեպքերի նշանակությունը, ձգտելով դրանցից սենսացիա ստեղծել և խեղաթյուրել փաստերը: Ընդ որում, - գրում էր թերթը, - ամերիկյան հատուկ ծառայությունները ձգտում են օգտագործել ցանկացած հնարավորություն բորբոքելու և ավելի սրելու ԽՍՀՄ-ում դեռ գոյություն ունեցող խնդիրները, օգտագործելով դրանք համայն աշխարհում սոցիալիզմի դեմ քարոզչության նպատակներով»¹⁸:

Արտասահմանյան լրատվամիջոցների հրապարակումներում խորհրդային մամուլը տեսնում էր մշակված «ռազմավարական քաղաքականություն» որն ուղղված էր Խորհրդային Միությունում առկա ազգային խրթին հիմնահարցերը որպես գործիք օգտագործելով մասնատել ԽՍՀՄ-ը: Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների լուսաբանումն Արևմուտքում, ըստ խորհրդային մամուլի, ցույց տվեց, որ չնայած տեղի ունեցող դրական գործընթացներին ու միջազգային հարաբերություններում գործընկերական հարաբերություններին, դրանք օգտագործ-

վում են որպես հարմար առիթ ի ցույց դնելու «հմայերիալիստական քաղաքականության դասական էությունը»:

Ավելին, որոշ հեղինակներ Ղարաբաղում և հատկապես Մումզսիքում տեղի ունեցած հակահայկական ջարդերը դիտեցին որպես հիմնական պատճառ Պակիստանի կողմից աֆղանական հարցում ժնկում ձեռք բերած համաձայնություններից խուսափելու համար, նշելով, որ Վաշինգտոնն ու Իսլամաբադն ի դեմս Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների տեսնում էին որպես հարմար առիթի՝ Մոսկվայի դժվարություններն օգտագործելով աֆղանական հարցում առավելությունների հասնելու և նույնիսկ ձգձգել Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերումը ձգձգելու համար¹⁹:

Որպես կանոն արևմտյան հրապարակումները Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների մասին ուղեկցվում էին հակամարտող կողմերի դավանական տարբերությունների շեշտադրմամբ: Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունները շատ դեպքերում դիտվում էին Ադրբեջանում իրանական արմատականության և իսլամական հեղափոխության գաղափարների տարածման պրիզմայով: Նույնիսկ հակամարտության սկզբից մեկ ու կես տարի անց արտասահմանյան հրապարակումներում խնդրի բարդացումը տեսնում էին հակամարտող կողմերի տարբեր դավանական պատկանելիության մեջ²⁰:

Շատ հաճախ ադրբեջանական մամուլը հանդես էր գալիս արտասահմանյան հրապարակումների քննադատությամբ, նշելով, որ դրանք լուսաբանելով Ադրբեջանի ներքաղաքական իրադրությունը ուղղակիորեն ապակողմնորոշում են ամերիկյան և միջազգային հանրությանը: Ներկայացվող մեղադրանքների մեջ նշվում էր որ Մոսկվայում հավատարմագրված որոշ արևմտյան լրագրողներ՝ Գ. Լին (Վաշինգթոն փոստ), Ու. Կելլեր (Նյու Յորք Թայմս) և այլոք գործում էին «առավել ռեակցիոն տրամադրված հայկական էմիգրացիայի հատվածի հետ»²¹:

Նույն հոդվածում ադրբեջանական թերթը նշում էր, որ արտասահմանյան լրագրողների շարքում ազգությամբ հայ լրագրողների ամկայությունը փաստում է, որ չպետք է հույսեր տածել արտասահմանյան լրատվամիջոցների Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների օբյեկտիվ լուսաբանման առումով²²:

1989թ. հուլիսի 19-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին գործերի հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ մի քանաձև ընդունեց, որով «ԱՄՆ-ի աջակցությունն էր հայտնվում Խորհրդային Հայաստանի ժողովրդին Լեռնային Ղարաբաղի շուրջ առկա վեճի խաղաղ և ազնիվ կարգավորման գործում» և որ «Լեռնային Ղարաբաղի ներկա կարգավիճակը շարունակում է անհանգստության և գծությունների առարկա հանդիսանալ հայերի ու

Աղորեջանի խորհրդային հանրապետության միջև»²³: Այս բանաձևի որոշումների մեջ մասնավորապես ասվում էր, որ «պետք է խրախուսել նախազահ Գորբաչովին Լեոնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու համար՝ կապված Հայաստանի հետ միավորվելու պահանջի, ինչպես նաև հայկական ժողովրդավարական շարժման հետ, որը ներառում է վերջերս ազատված «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին»²⁴: Վերջում այս բանաձևը կոչ էր անում Խորհրդային Միության հետ երկկողմ քննարկումների ժամանակ հարց բարձրացնել հայերի դեմ իրականացված բռնությունները բարձր մակարդակով հետաքննելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Այս որոշումը հանգեցրեց խորհրդային իշխանությունների և մամայի կտրուկ հակազդեցությանը և խորհրդային արտաքին գերատեսչության կողմից ԱՄՆ դեսպանին արված հայտարարությունում նման փաստաթղթի ընդունումը որակվեց որպես պահանջ-պրետենզիա և կոպիտ միջամտություն ԽՍՀՄ ներքին խնդիրներին, ինչը կարող է հանգեցնել իրավիճակի հետագա ապակայունացմանը: «Մենք չենք կարող չդիտարկել այս հրահրիչ ակցիան այլ կերպ քան «սառը պատերազմի» ռեցիդիվ, որը կարող է վնաս հասցնել մեր երկու երկրների ջանքերին՝ ուղղված խորհրդա-ամերիկյան հարաբերությունների կառուցողական զարգացմանը», - ասվում էր հայտարարության մեջ²⁵:

Այս բանաձևի կապակցությամբ իր բողոքն արտահայտեց նաև Աղորեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը: «Նյու Յորք Թայմս» թերթի խմբագրությանն ուղղված աղորեջանական լրատվամիջոցների համատեղ մամակ-բողոքում ասվում էր, որ «Պատմությունը չգիտի Աղորեջանի Գերագույն խորհրդի կողմից ԱՄՆ ներքին քաղաքականության վերաբերվող բանաձևի ընդունման որևէ դեպք»²⁶:

Արևմտյան քաղաքական շրջանակների ու ԶԼՄ-ների կողմից խորհրդային Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ ունեցած դիրքորոշումը որոշակի տեղաշարժեր ունեցավ հատկապես կապված 1990թ. Բաքվում տեղի ունեցած հայկական ջարդերի և դրան հաջորդած խորհրդային զորքերի մուտքի հետ:

1980-ականների վերջերին Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական գործընթացները փաստորեն Վարշավյան ուխտի մոտալուտ վախճանի նախերգանքն էին, ուստի Արևմուտքն ամեն կերպ փորձում էր «սիրաշահել» Մոսկվային՝ այս գործընթացներին ի պատասխան անկանխատեսելի քայլերից հետ պահելու համար: Հենց այս հանգամանքներն էին, որ որոշիչ դարձան անդրկովկասյան հակամարտությունների հարցում Մ. Գորբաչովին աջակցելու համար, որին Արևմուտքում համա-

րում էին Արեւելքի ու Արեւմուտքի հարաբերություններում լիցքաթափման լավագույն երաշխիք:

Բաքվում տեղի ունեցած հունվարյան իրադարձությունները որոշ արևմտյան լրատվամիջոցներ հակված էին դիտելու որպես իրանական մոլեռանդության դրսևորում, մի բան, որից ըստ մրանց վաղուց զգուշանում էին խորհրդային իշխանությունները: Դառնալով լուրջ վտանգ զորքաչույան բարեփոխումների հետագա իրագործման համար, կարծիքներ էին հայտնվում այն մասին, որ զորքերի ուղարկումը Բաքու կկարողանա սանձահարել բռնությունը, բայց չի թողարկի խնդրի երկարաժամկետ քաղաքական հետևանքները: Մյուս կողմից, օրինակ ֆրանսիական «Լիբերասիոնը» գտնում էր, թե Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունները կարող են օգտագործվել պահպանողականների կողմից քաղաքական բարեփոխումները կասեցնելու համար²⁷:

Բավական հետաքրքիր էր դանիական «Փոլիթիքըն» թերթի մոտեցումը, որը շեշտում էր ԽՍՀՄ-ին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: Մասնավորապես ամառը արկվում էր օգնություն ցուցաբերել հայ փախստականների համար բնակարանների շինարարության և աշխատատեղեր ստեղծելու գործում, իսկ մյուս կողմից նպատակահարմար էր համարվում ադրբեջանցիներին տնտեսական աջակցություն ցուցաբերելը:

Ֆրանսիական մամուլն էլ դեմս «Լը Մոնդ» և «Յումանիտե դիմանշ» թերթերի գրում էր, որ խորհրդային իշխանությունների նման որոշմանն էլ պատասխան պետք է սպասել արտաքին աշխարհի չափավոր արձագանքին: Անդրադառնալով Նախիջևանում տեղի ունեցած դեպքերին վերջինս գրում էր, թե նախնիների գերեզմաններն այցելելու և ազգականների հետ հանդիպելու ադրբեջանցիների պատճառաբանությունները սոսկ առիթ էին «բացառիկ ծանր հետևանքներով քաղաքական գործողության համար»²⁸: Մեկ այլ ֆրանսիական պարբերական, «Յումանիտեն» գտնում էր, որ Իրանի և Թուրքիայի սահմանների երկայնքով իրականացված գործողությունները ամենևին հախտում և տարերային չէին, այլ ընդհակառակը, ամեն ինչ վկայում է այդ գործողությունները հոյակապ կազմակերպված լինելու և Ադրբեջանի ազգայնականների, մաֆիոզների ու կուսակցական- բյուրոկրատական ապարատի համաձայնության մասին²⁹:

Իր հերթին անգլիական «Դեյլի թելեգրաֆը» գրում էր, որ պետք է ըմբռնումով մոտենալ խորհրդային իշխանությունների ձեռնարկած քայլերին, քանզի կենտրոնը ցանկանում է չեզոքություն պահպանել երկու թշնամաբար տրամադրված համայնքների միջև առկա հակամարտությունում: Թերթը գտնում էր, որ Գորբաչովի կողմից ուժի դիրքերից հանդես գալն ամենևին էլ չի նշանակում թե նա փոխել է իր սկզբունքային

մտնեցումը խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու համար³⁰։ Իսկ «Դեյ-լի միրոր» օրաթերթը գրում էր, թե նախագահ Գորբաչովը գործեց կտրուկ որպեսզի վերջ տա սարսափելի արյունահեղությանը։ Եթե այդ քայլը չիրագործվեր, «ասպա հայերի ու ադրբեջանցիների միջև իսկական պատերազմ կբռնկվեր։ Խորհրդային կառավարությանը այլ ընտրություն չէր մնացել», - եզրակացնում էր հոդվածագիրը³¹։

Իրոք, Վաշինգտոնի համաձայնությունն Անդրկովկաս գորքեր ուղարկելու Կրեմլի որոշման հետ անհավանական կարող էր թվալ դրանից մի քանի տարի առաջ։ Այս ընթացքում արդեն Արևմուտքում տիրապետում էր այն համոզմունքը, որ խորհրդային ռազմական վտանգը նվազ սպառնալից էր դարձել։ Ամերիկյան «Թայմ» շաբաթաթերթն այս առումով գրում էր, որ Սառը պատերազմից հետո Վաշինգտոնն ու Մոսկվան տարածայնություններ չունեն և ամերիկյան նախագահը բարոյապես կարող է ազատ զգալ և քաղաքականապես հանգիստ սեփական երկրի տարածքում կարգուկանոն հաստատելու համար գորքեր ուղարկելու խորհրդային առաջնորդների որոշմանը հավանություն տալու համար³²։

Սակայն գորքաչմվյան մարտավարությունն այս հարցում չստացավ լիակատար աջակցություն արևմտյան մամուլի կողմից։ Դրա վառ վկայությունն էր արտասահմանյան այն հրապարակումները որոնցում խորհրդային զորքերի մուտքը Բաքու համեմատվեցին 1956թ. Բուդապեշտ, 1968թ. Պրագա և 1979թ. Աֆղանստան խորհրդային զորքերի մուտքի հետ և մույնիսկ «խորհրդային կայսրության վախճանի» վերաբերյալ եզրակացություններ արվեցին³³։

Չնայած անցյալ դարի 80-ականների երկրորդ կեսին Արևելք-Արևմուտք հարաբերություններում արձանագրված անմախաղեպ դրական տեղաշարժերին և փոխվստահության մթնոլորտի ձևավորմանն ուղղված քայլերին, այդուհանդերձ երկու հակադիր գաղափարախոսական բլոկների միջև շարունակում էր տիրապետող մնալ Սառը պատերազմի ժամանակաշրջանին հատուկ քարոզչության և հակաքարոզչության եղանակներն ու մեթոդները՝ հատկապես ՋԼՄ-ների հաղորդումներում և հրապարակումներում։ Այս ամենն իր ուրույն արտացոլումը գտավ դարաբաղյան շարժման լուսաբանման պարագայում, երբ մի կողմից Արևմուտքը հակված էր այն դիտարկելու որպես հակազաղութային, ազգային-ազատագրական պայքար, մյուս կողմից ի դեմս այս շարժման տեսնում էր որպես հարմար նախադեպ ԽՍՀՄ-ը թուլացնելու և կազմալուծելու համար։ Ավելի ուշ Արևմուտքը հանդես եկավ տարածքային անձեռնմխելիության սկզբունքի հարգման դիրքերից։

DEMOYAN HAYK

THE LEGACY OF COLD WAR AND THE REPRESENTATION OF
KARABAKH CONFLICT IN THE WESTERN MASS-MEDIA
IN 1988-1990
(Summary)

In spite of impressive *detanté* and positive steps towards establishing of partnership in the relations between Eastern and Western blocks in the second half of 20th century, the legacy of Cold war was dominating with its specific methods and policies of propaganda and counter-propaganda. These were evident in the publications and broadcasting in both Soviet and Western mass media. It had a specific reflection especially in the media coverages on Karabakh conflict. Originally Western mass media was trying to estimate the events in Transcaucasus as an anti-colonial national-liberation movement and at the same time as an appropriate means to weaken and collapse Soviet Union. Later, the West moved away from its initial positions and in the Post-Soviet period the principle of preservation of territorial integrity became dominant.

ՇՆՆՈՒԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Г. Оганов, Крокодиловы слезы Би-Би-Си, «Советская культура», 31. 03. 1988; "Crocodile Tears" over Karabakh from BBC and British press, RFE/RL Records, 04. 04. 1988; Krasnyi Arkhiv, Open Society Archives (այսուհետ՝ HU-OSA), 300/80/1/14.
2. St'u "New York Times", 02. 03. 1988; «Литературная газета», 23. 03. 1988.
3. А. Заргаров, Кто разжигает страсти, «Бакинский рабочий», 06. 03. 1988.
4. Նույն տեղում:
5. Mark Saroyan, Trouble in Transcaucasus, "Bulletin of the Atomic Scientists", March 1989, RFE/RL, KRASNIY ARKHIV, HKAO, p. 34, HU-OSA 300/80/1/15.
6. Մի քանի փոփոխություններ Երևանի փողոցներում: Трещина на советском фасаде «Ньюсуик», Сто народов против Москвы, «Шпигель», Преследования в СССР, «Ле экспресс интернационал», տե՛ս «Аргументы и факты», No. 14, 2-8 апреля, 1988.
7. Ann Shelly, Soviet Media Coverage of Recent Events in Armenia and Azerbaijan, RFE/RL 109/88, March 14, 1988, p. 1, KRASNIY ARKHIV, Азербайджан-10, HU-OSA 300/80/1/12.
8. Ann Shelly, p.7.
9. «Аргументы и факты», 5-11 марта, 1988.
10. Г. Оганов, Крокодиловы слезы Би-Би-Си, «Советская культура», 31. 03. 1988.
11. А. Давтян, Бремя ошибок, время решений, «Социалистическая индустрия», 13. 05. 1988.

12. «Аргументы и факты», но 14, 2-8 апреля, 1988.
13. Նույն տեղում:
14. «На радиостанции «Голос Америки» существуют две «правды»: одна для армян, другая для азербайджанцев», ТАСС 08. 04. 1988, RFE/RL Records, USSR Today Soviet Media Actualities, HU-OSA 300/80/1/514.
15. А. Заргаров, Кто разжигает страсти, «Бакинский рабочий», 06. 03. 1988.
16. «Аргументы и факты», N 14, 2-8 апреля, 1988.
17. «Западная печать о Нагорном Карабахе», ТАСС 02. 04. 1988; RFE/RL Records, USSR Today Soviet Media Actualities, HU-OSA 300/80/1/514.
18. «Советская культура», 17. 03. 1988.
19. Юрий Бандура, Нагорный Карабах, недобрый взгляд со стороны, «Московские новости», 03. 04. 1988.
20. St'u Билл Келлер, Националисты в Азербайджане добываются крупных уступок со стороны партийного лидера, «Нью Йорк Таймс», перевод в газете «Комсомолец», 24. 10. 1989.
21. «Восточная» политика западных корреспондентов, «Бакинский рабочий», 06. 09. 1989.
22. Նույն տեղում:
23. Հեղինակի արխիվ:
24. Հեղինակի արխիվ:
25. «Известия», 21. 11. 1989.
26. «Бакинский рабочий», 18. 10. 1989.
27. «Аргументы и факты», но. 43, 27 февраля, 1988.
28. «Комсомольская правда», 23. 01. 1990.
29. Նույն տեղում:
30. «Коммунист», Ереван, 22. 01. 1990.
31. «Известия», 22. 01. 1990.
32. Michael Mandelbaum, The Trouble with Independence, «Time», January 15, 1990.
33. «За рубежом», но. 5, 1990.